

ՎԱՀԱՐ. ՆՈՌՊԱՐ. ՓԱԾԱ.

Օմիւռնիոյ Երշալյա լրտղրոյ մէջ ուշախութեամբ կարդացինք հետևեալը:

Աբշ-լուսոյ նախընթաց թռուով ուրախ որտիւ ծանուցինք լիսեմա. նուպար փաշային յաստիճան գուշիւնուն բարձրանալ. Գահիրէի մեր մեծարդոյ բարեկամներէն մէկը՝ կայսերական այս աստիճանարաշխութեան վրայօք հետևեալ մանրաման տեղեկութիւնները կը հաղորդէ մեզ:

Անցեալ ամսոյ 26ին օգոստա. Սուլթանին թիկնապահներէն թէշիտ պէ.յը՝ պատերազմական թալիս շոգննաւով կ. Պօլսէն հասաւ ի Գահիրէ: Նորին Ասեմութեան յանձնուած էր և կը բերէր զկայսերական հրովարտակն, որով՝ ըստ ինդոյ բարձրապատիւ Խըտիվին, իւր Արտաքին Գործոց Պաշտօնիսց լիսեմա. նուպար փաշային միշիւրութեան մեծ աստիճանը կը շնորհուէր:

Ուստի յիշեալ ամսոյ 28ին այս հրովարտակը մեծ հանդիսիւ կարդացուեցաւ ի փոխարքայական պալատն Քառու-էլ-Նիլ հուզուած. ուր ներկայ էին եղիպտական իշխանութեան բոլոր նախարարներն իրենց համազգիւսուովք. Երկու զօրախուում պալատին բակը՝ յիրկուս բաժմանեալ բարեկ կայնած էին. յորժամ զինուորական նուազարանաց ներդաշնակութիւնն զագարեցաւ, վաեմ. Թալաթ փաշան ի լուր ամենեցուն սկսաւ կարդալ վեհա. Սուլթանին հրովարտակը զօր՝ լմբնցնելէ ետև, ակնածական յարգանօք յանձնեց ի ձեռս Խըտիվին. Նորին Բարձրութիւնն ևս իւր ձեռօքն յանձնեց զկայսերական հրովարտակն՝ իւր սիրելի նախարար Հայկազուն նուպար փաշային իւր սուլորական մարդաբութեամբը շնորհաւորելով զնորին Ասեմութիւնն: Յետ այնորիկ բոլոր հանգիստականք՝ իրենց խնդաշցութիւնները բազում սիրով յայտնեցին Արտաքին Գործոց Պաշտօնէին:

Երկու օր եաքը լիսեմա. նուպար փաշան՝ այս բարեպատեհ առթիւ, 24 անձանց համար յոյժ փառաւոր հացկերոյժ մի տուաւ յապարան իւր, ուր բաց ի կայսերական թիկնապահ թէշիտ պէ.յէն, ներկայ էին նաև գահաժառանդ իշխանը, բարձր սպատիւ Թէլֆիք փաշան, իւր եղբարբը,

փոխարքայական տանը վերաբերեալ փաշայ.ք և բարձրաստիճան նախարարը), :

Ասիմա. Նուպար փաշային յայս մեծ աստիճան բարձրանալն որչափ որ պարծանք և անզուագական ուրախութիւն մըն է ընդհանուր Հայոց ազգին, նոյնչափ ազգային խորին երախտագիտութեան արժանի է վեհ և ազնուական զգացմունքը բարձրու. Խըտիվին, որ զիտէ վարձատրել մարդաբութար զհանձարեղ և զինցազագէտ հաւատարիմ նախարարս իւր:

Արշալյա Արաբատեան, թիւ 971, Անդամներ 22.

Հետևեալ յօդուածին մէջ ուշադրութեան արժանի պարբերութիւններ ևս գտնուելով, արժան կը համարիմք օրինակել աստ:

ԵՐԿՐԱԳՈՒՐԴԵԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԳԻՍ
Ի ԶՈՒՒՑՑԵՐԻԱ.

Գլխաւոր երկու միջցներ կան մարդկութեան ապրուսան հայթայթող, այս ինքն երկրագործութիւնն ու վաճառականութիւնն. որովհետեւ երկրագործը զհացն հոգէն ի զյ կածէ և վաճառականը զայն կը տարածէ ամենայն ուրեմք, և այս երկու զինաւոր արզիւնքը մարդուս քրտանց ամենարդար վաստակը կրնայ սեպուիլ, քանի որ ոչ շողագործութիւնն, ոչ ստախօսութիւնն, ոչ անիրաւ պահանջմանք և ոչ ալ հարստահարսութիւնք կան գոյա մէջ, ևթէ բոլոր արհեստներու և շահու մզյր երկրագործութիւնն ու վաճառականութիւնը ընդունուելէն յետոյ, նաև այս երկուքն ալ քննենք՝ կրնանք ըսել որ միմիայն երկրագործին վաստակն է սուրբ վաստակ, և թէպէտ պէտք էր որ երկրագործը մարդոց երջանկազցնը լինի, Կարծիք մը կայթէ, Հայերուս յեւրոպայում շատնալովը, Եւրոպան կը ճանչնայ զհայաստան, թէ մեծ պատիւ է Հայութեան եթէ Եւրոպայի խորհրդարաններում, պալատներում և ուրիշ քաղաքական, ուսումնական ևլու բարձր ասպարէզներում, բարձրաստիճան Հայեր զանուին, թէ այս վերջններով Եւրոպան առաւել ևս կճանչնայ և կը սիրէ զայն

կամ՝ զնայաստան։ Այս կարծիքը միայն կես մը ճշմարիս է, որովհետեւ ինչ արհամարք որ այդ մաս- նաւորութիւնը կատանան, Հայաստանէն չեն բե- րեր զայն, այլ նախ կ'Ներոպանան և իրենց մաս- նաւոր ջանքովը կը յառաջանան. ուրիմն իրենց այդ մասնաւոր մեծութիւնը Հայաստանի աղ- բանք չեն և Հայն ինք զինք կը խարէ այդ մեծա- մեծներու կամ՝ յառաջադէմներու արժանիքը իւր- մէն տրուած համարելով և ընդ այն պարծելով. զոր օրինակ ելմէ Եւրոպայի մի երեւելի զպացում Հայ մը փառփեսէօս կը լինի և դիմոց մեծ ծա- ռայութիւնը կը մատուցանէ, դորա մասին մնաք պարծենալու իրաւոնք չունինք, քանի որ նա իւր փոփէսէօսութիւնը Հայաստանէն չըերաւ, այլ յԵւրոպ ուսաւ և անգ բարձրացաւ։ Ուրիմն քա- ղաքակրթեալ ազգաց ծանօթանալու համար պէտք է որ մեր երկրին արդիւնքը դործը առ մարդկութիւ- նըն մատուցած ծառայութիւնը ներկայացնենք, պէտք է որ Հայութիւնը կամ՝ Հայաստանին մէջ ճանչցուի իւր զյութեամբն ու պատմական կեան- քովը, կամ բուն Հայկական մեծագործութիւնք ներկայանան Եւրոպային։ Այս երկու առարկու- թիւններէն առաջինը գեա շատ հեռու է, որովհ- չեսու Եւրոպացին ցայսօր մինչև Պօլիս եկած է և զիս մեր Հայրենինաց Խօսքերն անծանօթ իրեն. (պէտք է զիտնալ որ՝ 20—30—40 կամ՝ աւելի Եւրոպացի հնախոյզներու, ճանապարհորդաց և կամ՝ քանի մը բաղդախնդիրներու ներկայութիւնն ի Հայաստան չճանցնէր զինք Եւրոպային)։ Եւ եմէ յուսամք որ մը ճամքաներ շինուելով Եւրոպացի գաղթականներ խսկ պիտի զանախն մեր երկրը զմեզ ևս լուսաւորելու կամ կթելու, լաւ ես է որ՝ այդ յըսը գոյութիւն չունենայ, որովհ- չեսու եմէ տգէտ ժողովրդեան մը մէջ Եւրոպացի զիտուն, և խորամանկ մարդկէը մասնեն, վայ այն ատեն՝ որ զայցէ մեր սեպհական հողերն ալ ձեռ- քերնես խլելով, իրենք պիտի ըլսն ուղարկ և Հայը մշակ . . . :

Իսկ զալով երկրորդ առարկութեան այս բնդն, Հայկական դործոց և արուեստից արդեանցը յԵւ- րոպացում ներկայութեանը յայտնի է թէ այս- պիտի մոածութիւն մը իւթօփի է. վասն զի թու- զունք որ գեղարուեսի և երկբազործութեան մէջ

դեռ Հայը խիստ մանուկ է, հարցնենք մէջ մը թէ Հայը վաճառականութիւն ունի, Եւրոպա կուզայ, ինչ առուտուր կընէ, իւր յարաբերանթիւնը ոյց ունաց լուսաւորեալ ազգաց հետ են, այս հարց- մանց պատասխանելու համար—պէտք է քիչ մը շոշոկումները մէկ կողմ զնել և չը պարծիլ թէ և Հայը վաճառական ժաղավարդ մ'է, որովհե- տեւ իւր վաճառականութիւնը զրեմէ չերշութեա- նէն քիչ բարձր է, իւր լուսաւորեալ զրացիքն են Ասիր տաճիկներն ու քիւրերը և իւր առու- տուրը միայն դոցա հետ է։ Մարսիլիոյ, Լոնտօ- նի, Փարիզի և այլ քանի մը քաղաքաց մէջ չորս ու կէս Հայ վաճառական զանուելով՝ պէտք չէ խարսիլ որ Հայը վաճառական է, մանառանդր թէ այդ քանի վաճառականին ծախածն ալ եր- բեք Հայու ապրանք չէ, կարելի եր նաև Հայուն վաճառական ժողովուրդ ըսել, եմէ իւր նախա- տած չփթին ու չհանած հոռոմին պէս զգալի ընէր իւր վաճառականութեան գոյութիւնը և ու- րով նաև իւր ազգը ճանչցնէր Եւրոպային։ Ու- րիմն այս մասին ալ զես տեղ մը չունի Հայը լու- սաւորեալ ազգաց շարբաւմը, ուրիմն Հայը եմէ չերշէ չէ, վաճառական ալ չէ։

Երդ ինչ է Հայուն զգիքը աշխարհի վայ. — ա- ռանց ընդդիմանութեան երկրագործութիւնն, այդ մասին զեռ չը խօսած, հակիրճ տեղեկութիւն մը տամ քեզ, սիրելի Հայ, . . . օր մը Զու իցերից Ելթորփ ըսուած զիւղաքաղաքն էինք, — Հայե- րուս առաջնորդող Հայակը, զիտնական և բա- րեսիրտ տնօրէն Պ. Փրիզին հետ այն տեղ զա- ցինք շքջելու վանք մը. Դամինիկեան կատուի աշ- քեր ունեցող բոկուն վարդապետ մը որ՝ առաջ- նորդէր և կը ցցնէր մեջ տեսնելու արժանի տե- ղերն ու բնութեան զանազան տհարանները. երբ իմացաւ մեր Հայ լինելը, հարցուց Հայաստան երկիրը Գահիրէի մէջ չէ², ասոր պատասխանը դուն տուր, ընթերցող.

Երկրորդ օրն էր (այդ վարդապետին հարցմուն- քէն ետքը) Լուչերնում քաղաքի 45—50 տա- րեկանի մօտ վարժապետ մը, որ՝ ի սկզբան կը ձեւացնէր թէ Հայոց պատմութիւնը և ներկայն զիտէ լաւ կը ճանչէ, և թէ սիրելի է իրեն ման- րամասն տեղեկութիւններ Հայոց ներկայ վիճա-

կնն վըայ, երբ այս միջոցին խումբ մը հեծելազօռաց և խումբ մըն ալ հետեւակ զօրաց զինուորական կարգաւ և խուազարանով համբնթացիկ անցնելը տեսներով իւր խօսքն ընդմիջեց և հարցուց խկոյն, « Հայոց Միլիթեար ի՞նչպէս է, քաջ են, լաւ և վարժ կը պատերազմի՞ն, . . . :

Նոյնպէս բաւական « շենք չնորք, հագուած երկու քաղաքացիներու Հայ ըլլազդ կիմացնես, կընայ պատահիլ որ՝ քաղաքացին իւր ընկերին հարցնէ թէ « Արմենիան ի՞նչ բան է, կուտուի» թէ կը խմուի, . . . : Աերջապէս զիտուն և բանաստեղծ համբաւեալ վարժապետ մը բոլորովին անձանօթ չըլլալուն համար Տիգրանը, Միհրդատն ու Արտաշէսը զիտէ, բնչպէս նաև Հայոց Ակիչէմ—թէ լը (Արդան) կը սիրէ և փախաք կը յայտնէ տեսնել իւր պատկերը Աւարայրի երգչի պատկերին հիսու:

Ահաւասիկ, վարդապետ, քաղաքի վարժապետ, քաղաքացի և երկելի զիտուական, այս չորս վիճակի արանց ունեցած ծանօթութենէն կարելի է եղբափակել թէ Հոյը որչափ ճանչցուած է Եւրոպայի մէջ, մինչզեւ ամենայն վատահութեամբ կրնանք ըսել որ՝ ամենասամիկ զեղացի Հոյը գունէ լսած է Փաէնկ, Խնկիլիզ, Մօնկօֆ, Դէմքէ և Զուիցեր ազգերն ու երկիրները. առոր պատճառը խորհող մը շուտ կրնայ գոնել:

Հոյը կրօնական ազգ մը ըլլովէն յետոյ՝ է մի միայն երկրագործ ժողովուրդ. այս, քանի որ եթէ չորս միլիօն հաշուենք, առ նուազն՝ 2¹/₂ միլիօնը երկրագործ պիտի զտնենք. ուրին իւր երկրագործ պէտք է ներկայանանք Եւրոպային, և փառք մեղ եթէ իւր երկրագործ կարենանք պարզերես պարծել՝ թէ « այդ արժանի եմք երգրագործ կոչուելու», Սակայն եթէ հմաւու երկրագործ մը քննէ նաև մեր այդ դասին կեանքը և բաղդատէ այլոց հետ, այն եղբակացութեան պիտի հասնի՝ որ այդ ալ միայն սնգուրեալ ցոյց մ'է և ոչ մի ուրիշ բան։

* * *

Յարդ զրածներս վերնազրիս հետ զրեթէ վերաբերութիւն մը չունեցան, սակայն այդ վերնազրին ներփակ՝ մի կարծեր ընթերցող, որ՝ երկելի

պանչելիքներ պիտի նկարազրենմ, ոչ այդպիսի Արուեստահանդէս մը դու միշտ կը տեսնես Քերաւիկամ այլ տեղերու մանաւներուն խանութը ինչպէս նաև Հայաստանի այգիներում և պարտեղներում։

Աւստի այս տեղի արուեստահանդէսը յառաջադիմական և երկրագործութեան զարգացման սպատակներով կազմուած սովորութիւն մ'է միայն, այսպէս։

Զուիցերից իւրաքանչիւր գաւառը ամեն տարի որ և է մեկ զիտուոր զիւղին մէջ ընդարձակ հրապարակ մը կը զարդարէ, ուր կը զետեղէ իւր երկարին արտադրած բոլոր բարիքն ու զիտուոր կենադանիքը ի տես հասարակաց. այդ արուեստահանդէսը զեթէ չորս օր կը տեւ և շրջակայ բոլոր ժողովուրդը միայն 50 սանթիմի ծախքով մը իւր զրացի զիւղացւոյն ի տես հանած բարիքները և զոյն արտազրելու միջոցները կը տեսնէ փօխազարձ և կը ջանայ յաջորդ տարւոյն ինքն ևս մշակել զանոնք. կարծեմ աւելլորդ է յիշել թէ այդպիսի, թէւ փոքրիկ արուեստահանդէս մը ոչ թէ ապարդիւն չէ, այլ և իսկ բազմամթիւ օգուտներն ունի, որք անուրանալի են։

Այդ հանդիսավայրը այս տարի Յիւրիխ գաւառում Մայն կոչուած զիւղումն էր, մեր գիւղէն քալելով 1¹/₂ ժամ հեռու։ Զուարձալի է քալել այս ճանապարհը բնութեան շքեզ տեսարանները վայցելով. քան թէ շոգինաւին բնու լինել։

Ճանապարհը ծաղկապսակ կամաներով, վարդերով, զրոշակներով և զանազան հայրենասիրական և երկրագործութեան օգտակարութեանցը վրայ զրուաչ փոքրիկ խօսքեր և ոտանաւորներով զարդարուած են. իսկ երբ Մայն հասնիս, զայն ճանշնալու համար երեւակայէ քեզ մայիս 2⁴ ին Պէջ բոզի փողոցները, սներն գաշտավայրն և ուշրիշ ամեն այն բաները՝ որ հանդիմն չուք կուտան. մանենք այժմ արուեստահանդէսի հրազարակը, ուր խուռն բազմութիւն մարդկանց մի առ մի տեսնելով իրենց հայրենեաց և աշխատութեանց արդիւնքը կդրարձանան։

Այդ բերքերուն վրայ համառօտ տեղեկութիւն մը տալու համար կրցածիս չափ թաւեմ տեսներս ու զիտցածներս. « կաղամբ, շողզամ, բողիք

ստեղծին, զդում, տակ զանկառ, սիրախնձոր, զետնախնձոր, սոխ, սիրառ, քսխա, պրատ, ջրի դը-
դում, լուսի, բահնեն, սամիթ, գաղճ, աղատքիղ, քոշմաթ, փշփշուկ, ծուաղեղուկ, խաշխաշ, հա-
զար, մալոշի, վարունգ, սեխ, հնտացու, տանձ, խնձոր, խաղող, սալոր, թուզ, դեղձ, ծիրան, ըն-
կայլ, նուշ, կաղին, աղուձ, եղակ, սերկեխլ, մո-
րի, կորիկ, կտաւատ, զարի, ցորեն, մարացորեն, վարսակ, կանեփ, իշկորեկ, աւել, ցախ, փեժմակ,
մեղք, մեղքամոմ, կարաղ, պանիր, հաց, ելն, ելն,
ելն, ուրիշ զանազան բերքեր, պառողիկ, ընկե-
ղիններ, որուց մեծագոյն մասը վերը միշածներուս
տեսակներէն են, որոնք ինչպէս նաև Հայերուս ալ-
ծանօթ են. կային նաև երկրագործական զանազան
մեքնայներ, ասյլիր, հերկելու, հնձելու, ցանելու
ելն. ելն գործիքներ: Եթէ այս պառողներուն և
բերքերուն շատերը ի Հայրենիս տեսած և մշա-
կած չլինէի, երբէք չէի կրնար հաւատով որ մեր
Հայրենին էլ այսպէս բերքեր ունի՝ մինչև հօխա-
նոց տանձեր և խնձորներ (զանազան տեսակնե-
րով) և լաւ խաղողներ կային, թէպէս այս մա-
սին Հայաստանը կրնայ միզիլ և զուցէ յաղթել
Զարդերիան, բայց սա տարրենութեամբ, որ անդ
միայն Աստուած կուտայ, իսկ ասու արհեսոր ըսել
է թէ մեր ճարտարութիւնը դարձեալ գործ չունի
որս մէջ:

Ասկէց զատ մեր նինէներու հետեւալ խօսքը
ցատալի ճշմարտութեան մը կարգը կանցնի այժմ, թէ
“մէծ ու պղոփկ չմնաց, խեր պէրէքէթ ալ
չմնաց.” որովհետեւ եթէ Հայաստանի մի ծերուկ
պատրային երկրն արգասաբերութեան նկատմամբ
տեղեկութիւններ հարցնեա, նա քեզ ըս պիտի
պատասխանէ թէ “միայն այս մէկ այզիին խաղո-
ղովը կատրէր հաւս, հայրս, նաև ես, բայց այժմ
ունինք չորս այզի և հազիւ ուտելու խաղող կը
դունինք, ալ զինի ի՞նչպէս ունենամ”, թէ մանկու-
թեանս ատեն 10, 20, 40, 60 բազմազան պտղա-
տու ծառեր կային և ամեն մէկ ոստին ներքեւ յե-
նարաններ կը գնէր հաւս որ չկոտրին պտղուին
ծանրութենէն, բայց երթալով չորցան ու հատան
և հիմայ պտղուի երես չենք տեսներ.” Այս, այս
և այսպիսի դառն իրողութիւններ ականատես վը-
կացք և լողք կրնան հաստատել, մանաւանդ թէ

ես իսկ զիտեմ և լսած եմ ասոնք, այսպէս է
նաև մեղ մօտ հողին արգիւնքը՝ այս ինքն հացը
կամ ցարէնը, որուն ապացոյց է պանդուխտ հա-
յերու բազմանալը հետզետէ զանազան քաղաք-
ներում, որք յարօրը թօղած են և սէմէրը կը
շաղին ապրուատ ճարելու համար:

Մեր արուեստահանգէսի մէկ մասումն էլ զը-
րուած էին կենդանիք, բայց միայն եղ, կով և
խոզ, ասոնց վրայ ևս համառօտ ծանօթութիւն
մը տալու համար կրնամը ըսել որ՝ եթէ մեր երկ-
րագործ Հայը իւր կ եղերէն զանգուած մը շինէ,
հազիւ կրնայ սոցա մէկ եղին չափ լինիլ, այդ
զանգուածը և թէ ամենալքատ զիւղացի կամ
երկրագործէն սկսելով մինչև հարուստը 25- մին-
չև 25-30 այսպիսի եղեր ու կովեր ունի Զուի-
ցելացին, որոց իւրաքանչիւրը 600-1000 ֆրանք
կարժէն, մինչզեռ մեր խեղճ զիւղացին հինգ տա-
րի Պոլիս կը կմնայ, որ 500 դշ. հաւաքելով եղ
մը զնելու կարող լինի: Խոկ խոզը արգէն ան-
ծանօթ է մեղ մօտ և անսուրը կենդանի նկա-
տուած, այլ ի՞նչ օգուտ որ եւրոպացոց հարո-
ւութեան մէկ մասն ալ այն է, և շուտ կը բազ-
մանայ, և իւր փաքրիկներուն միտէն կարելի է լաւ
“Փուրուն քէպապի, շինել, զոր զուցէ զայն ան-
սուրը համարող աղբարիկը” իւր մասներն ալ
շետը ուտէ:

Գեղեցիկ տեսք մը կրնածայէր փափուկ, սպի-
տակ, մաքուր և քիրուկ խոզ մը իւր 11 հաս
փարբիկ ջուտերով . . . :

Այս արուեստահանգէսը, ինչպէս ըսի, ըստ ին-
քեան երեկղի բան մը չէ, այլ պարզապէս մեծ-
կակ մանաւի խանութ մը և քանի մը կենդա-
նիք, բայց Զարդերացին այնպէս չնկատէր զայն,
այլ իւր շարժումները, առ այն ցցուցած համակ-
րութիւնը, ուրախութիւնը, հանգիստիս յա-
խնուռն բազմութիւնքը ելն կցցունեն որ՝ իւր ը-
րածը ամենամեծ բան մը կը կարծէ, և եթէ իրեն
հարցնեա, ԱԷնեայի արուեստահանգէսէն վեր կը
դասէ իրենը, միթէ այսպէս մտածելով կը խա-
րուի արգեօք, ու քանի որ նոյն (Վ.իէնայի)
հանգէսին մէջ ալ երկրագործութեան և ման-
կավարժութեան առաջին միտաները կստանայ,
ուրիմն զա հպարտունալու իրաւունք ունի:

Գարունը երբ օգիրը բացուելով տեղացիք սկսան սցցները յօտել, փորել, մաքրել, պառատատել և սարնել, կը տեսնէի որ իւրաքանչերը որմին վրայ միայն մէկ ոստ կը թողէին և կը մասձէի ինքնիրենս թէ մէկ ոստը որչափ խաղող կը այս տալ, մինչդեռ մեզ մօտ իւրաքանչեւրը 8—9 ոստեր ունին և որմերը խոշոր ծառերու չափ են, բայց այժմ կը տեսնեմ որ առնուաղն ամեն որմատունկ 8—10 կայ խաղող ունի և ամեն մէկ կորզը կէս կէս օհայ կը կշռեն միջին հաշուով, որմատունկերը զրիթէ իրամէ 5 տասնորդամեթու հեռու տնկուած են, ևրու ենթադրելով որ՝ զիւզացի մը միայն մէկ այզի մը ունի, 3000 որմատունկ կը պարունակէ, ըսել է թէ 1500 հօխայ խաղող պիտի կրնայ ստանալ միջին հաշուով (և քանի որ փոխանակ խաղող ծախելու զինի կը շինէ և կը ծախէ, ըսել է թէ աւելի կը շահի զինի ծախելով), բայց ըսելով թէ խաղողը կը ծախէ և հօխան 5 դշի, (որովհետեւ փունաը այժմ 90 առնմիմէ և սոցա փունաը զրիթէ 5 | 4 հօխայի կը հաւասարի, հիտեարար հօխան 6 դշ. պէտք է հաշուել, բայց հոգ չէ), կստանայ 7500 դշ. ստակ միայն խաղողէն, մենք թողլով որ զինի ծախելովը աւելի պիտի կրնար շահեր նաև ենթադրելով որ աւելի քիչ որմատունկ ունենար, և աւելի աժան ծախէր, ըսելով թէ 5000 դշի, խաղող կը ծախէ Զորիցերիացի մը:

Եւ հարցնենք թէ արդեօք Հայ մը ցայսօր 5000 փարացի խաղող ծախած է. շատ տարակուսելի է քանի որ Ասից մ.ջ խաղողին 1 | 3 | 5 | մինչև 7 հօխան մէկ դշի, ալ կը ծախուի և առնող չփայ, —պատճառ, —որովհետեւ չեն մասձեր թէ կարեի է այն ամենապատուական նոյեան այդին ներտարի պէս զինի շինել, վարձատրել գեղացիու լցնել տիկերու մէջ, և տանիլ Եւրոպա պատռաւականական կաւու շինելու, “իբուհ, Եւրոպացին Պօրտօն թողած Շիրակայ և կամ Քողման զինիները թերանը կառնէ, ըստ լինի գուցէ, այս հարցմանը քրիչչը մը թող ընէ, կամ այն որ՝ ոչ առած է և ոչ խօսծ նոյի զինին, այն Հայը եթէ զոնէ զինի Եւրոպա տանել ծախելու չափ քաջութիւն և ճարտարութիւն ունենայ, միայն

անկէց երեք կերպով կօգտի. Ա. զիւզացւոյն խաղողը կարժէ, Բ. Հայ վաճառականը կը շահի և Գ. Հայու զինին հետ ինքն ալ կը ծանօթանայ. Քայց յայտնի է թէ՝ պապիսի նիւթոց վրայ ոչ լիուի զրելու կրնամ յաջողիլ և ոչ իսկ միջոց ունիմ, վասն զի այս նիւթերը հեղինակներու և մասնաւորապէս լրացրաց պարտքն է քարոզիլ, ես պարզապէս քանի մի տեղեկութիւններ տալ կը փափաքէի յուսալով որ՝ օգտակար կրնայ ըլլալ ընթերցողին:

Խօսք լմնցոցի բայց մեղանչելով ուստի զըղջումս ալ զրեմ ի քաւութիւն: Պոլիս կարծեմ տասնէն աւելի ազգ, թերթեր կը հրատարակուին, ամենքին բրոկրամն ալ մի և նցն ըլլալու պայմանաւ, այս ինքն ամեն օր թիւնին կամ ուրիշն հազարն ու վորոնքմալը, այս ինչ գետպանին կառքով կամ ձիով երթալը, փաշաներուն իրարու հետ տեսնուիլը են, ևն ամենքն ալ կը հրատարակուին. բայց թէ ի՞նչպէս կրնայ զիւզացին աւելի արդիւնք ստանալ թէ ի՞նչպէս կրնայ վաճառականը աւելի շահիլ են, ևն զանազան կենաւական խնդիրներու վրայ խօսող հանդէս մը չկայ զեռ, և մէկ կողմէն ալ ժողովուրզը կը բամբասն որ ընթերցաւէր չէ. ինչո՞ւ իւղացին ստակ տայ անձնական կոխներ լսելու և հայ հոյութիւններ սովորելու համար, Երկրագործական օգտակար տեղեկութիւններ հոգացող հանդէս մը հրատարակէ, տես թէ ի՞նչպէս սիրով կը կարգայ այն խըմալը ըսածդ. վաճառականական թիրթ մը հրատարակէ, տես թէ կապրիս թէ ոչ, վիրշապէս ժողովրդան կենդին ամենակարեւոր մասանց և իւր շահուն նկատմակը օգտակար և ներհուն տեղեկութիւններ հրատարակէ, որպէս զի ես, իր ժողովուրդ օգտա քաղեմ անկէ և սիրով վճարեմ ու կարգամ, Մեղք չէ իմ ճակտին քրտանց որ՝ ինձ անօգուտ, միօրինակ, հանապատօքնայ թիրթի կտորներու տամ:

Կափներէն, հայ հոյութիւններէն մանաւանդ թէ կը վասուեն ժամանակս ալ վասնելով, մէկը միւսին գաւաճան ըսաւ, ուրիշ մի կենդանի, կամ անկենդան կուցց, երրորդ մը աւելի նոր հայ հոյութիւն մը ստեղծեց, ինչ մէծ զիւտեր և ի՞նչ մէծ ծառայութիւնք ազգին, անունին Եղշէին

քով զրելու է . . . , Եղբայր, ընկերդ մասնիչ կոչելով՝ ինքը ինք Ապօքանի տեղ մի՛ զերւ Եւ փոխանակ Մշեցին կամ միւսով եղբայրն եղբօր դէմ զրդու կու, սորուեցուր այդ խեղձին թէ (եթէ գիտես և կրնաս) ինչպէս կրնայ իր հոյրենեաց մէջ իւր պարէլով ճարել, և վերջապէս քարողէ ժողովովին իրեն օգուտ տուող այնպիսի սկզբունքներ, որ գէս զի նա համաձայնի և կարենայ ըսել թէ ։ Եկայք շինեցուք սուրբ զիսորանն լուսոյ, քանդի ի օմա ծագեաց մեղ լցոյ ի Հայուաստան աշխարհին, աղա թէ ոչ աւելի լու կընէ ժողովուրզը փոխանակ քեզ իրը խրատողին մըտիկ ընելու ։ բժիշկ, բժշկեա զանձն քու ըսէ ։ Տասես, օրբելի եղբայր։

Պ. ԳԵՂԻՔԻԱՆ

Մանկութեա Եֆեաք, թի. 2323, 2324. Սեպտ. 27.

Պօլսոյ արուարձաններէն ի Ճիսար գանուած Ուսուլերնեան բողոքականաց վարժարանի մէջ՝ աղատամիտ դադախարներով հրատարակած յայտադրին ընդդէմ՝ ի զործ զրուած կրօնամոլական բանութեանց համար տեղի առուած անցից վերայ լրազրաց ոմանց մէջ կարդացուած տիսուր նկարագիրները աստ քաղել և հրատարակել կարե որ կաեմնեմք։

ՈՒՂԵՐԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

Ամէն հայ լրազրիք Ռուպէրթեան վարժարանին այս վերջին օրերս բռնած կրօնամոլ ընթացիցը վրայ զրեցին, ուստի մեզի ալ հարկ է իրը հայ լրազրիք մը քանի մը խօսք ուղղել զպրոցին տնօրէնին։

Առկեց տասն և հինգ տարիի չսափ առաջ երբ բողոքականութիւնը Պօլսո մատու ոյն տասն միսիօնարները սկսան աժան զիբը ծախելով զմէզ որ սալ աժաննէ ոչինչ զիներով որ՝ ՅՈ զուրու շի արժարագութեամբ զիբը մը մինչև ՅՈ փարայի ծախել սկսան, բայց տեսան որ այնքան սարասիելի գումարներ վատնելով հանգերձ չկրցան իրենց նորա-

տակին հանիլ, սկսան ուրիշ միջացներ մոռածել, և ճշմարիտը խօսելով զտան այնպիսի միջոց մը որ քար մը նետելով երկու ընկուղ պիտի ճգէն, որով թէ մեր մատաղ զաւակունքը ուսման պատրուակաւ պիտի խարէն, և թէ այգան տարուան ցրուած ստակնին մէկիկ մէկիկ պիտի ժողովին, այս անգամ հրացանը սրտելոնու ուղղեցին, բայց իրենց գժբազութենէն զնտակը սահեցաւ և պարտեալ ետ զարձան։

Մեր հասարակութիւնը այնպիսի բնաւորութիւն մը ունի՝ որ ամեն երեսը խնդացողը իրեն բարեկամ կը կարծէ, և երբ խարուած ըլլալն իմանայ, այն տան կը վրդովի, կը բարկանայ, կը կուռի և վերջապէս կը յաղթէ, բայց եկու տես որ այս խարութիւն ալ անմիջապէս կը մոռնայ և ուրիշ շատ անգամներ ալ նորէն կը խարուի, ինչպէս որ այսքան տարուան փորձերէն յայտնի է։

Ո Փորձեալը կրկին փորձելը յիմարութիւն է, առակը ամեննեին մեր ազգին համար չէ ։ և մեր այս անսարքերութեամբն է որ հայ ազգը երկու երեքի բաժնուած է, գուցէ ասանկ երթայ նէ քանի մը բաժանուամեր ալ աւելնայ։

Մեր հայ լրազրիներն ալ որչափ որ ներքնապէս մէկդէկ զդալ մը ջուրի մէջ խեղղել կը նային, դուրսէն յարձակում մը ըլլալուն պէս ամենը կը միանան և կոկոնին դէմ դնել, շատ անգամ ալ կը յաջողին յաղթանակը վաստիելու, և ահա այս անգամ ալ հայ լրազրաց պոռչուութիւն Ուոպէրթեան վարժարանը զաւակնին տուող հայրերը թմրութիւնէ սթափիելով՝ հասկցան խարուած ըլլալնին և իմացածնուունային երեսուն հատէն աւելին իրենց զաւակը վարժարանէն հաներ են, միանդամայն տուած ստակնին ալ պահանջելով, Յուսամք թէ մնացածներն ալ պահանջելով կը յետելին։

Բայց բողոքականաց խորամանկութիւնը շատ է, հարկաւ ուրիշ միջոց մը ալ կը զանեն դարձեալ ազգին մէջ մուելու, և մեր հայ ժողովուրիլը թող հիմակուընէ պատրաստ ըլլալ խարուելու և վերջն կրակ կայ պուարու։

Քանի որ այս միամիտ բնաւորութիւնը մեր վրայ է, տան ատեն օտարին թէ ուղղակի և